Հրապարակման ենթակա է

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը՝

Միքայել Փաշայան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2019թ. մայիսի 22-23-ը:

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Աշխատաժողովի ընթացքում նախատեսվող քննարկումների արդյունքում ունենալ դրոշմավորման պահանջների ազգային ստանդարտներին համապատասխան չափորոշիչներ:

6. Քննարկված թեմաները՝

Եվրասիական տնտեսական միության տարածքում ապրանքների նույնականացման միջոցով ապրանքների դրոշմավորման տեխնոլոգիական ասպեկտներին առնչվող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Քննարկվել են դրոշմավորման պահանջների ներդաշնակեցման առանցքային հարցերը, այդ թվում՝

- ազգային ստանդարտներին համապատասխան ձևավորված դրոշմավորման ծածկագրերի թվային պաշտպանություն, դրա օգտագործման հիմնավորում,

- անդրսահմանային առևտրի իրականացման ընթացքում դրոշմավորման ենթակա ապրանքի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը:

Վերը նշված հարցերի շուրջ աշխատաժողովի մասնակիցները եկել են հանձայնության, որի արդյունքում Եվրասիական տնտեսական հանձնաժողով ձեռնամուխ կլինի էլեկտրոնային

ուղեկցող փաստաթղթերի անդրսահմանային փոխանակմանն ուղղված ծրագրի իրականացման գործընթացի արագացմանը:

Անդրադարձ է կատարվել Բիզնեսի համար առաջացող ռիսկերին (հատկապես փոքր և միջին), որոնք կապված են դրոշմավորման ներդրման հետ, Անդամ պետությունների ներմուծողների համար բիզնես գործընթացների սխեմաների նկարագրությանը՝ միության անդամ ոչ բոլոր պետություններում դրոշմավորման ներդրման պարագայում, ինչպես նաև քննարկվել է նույնականացման միջոցով կոշիկի արտադրանքի պարտադիր դրոշմավորման ներդրման վերաբերյալ Խորհրդի որոշման նախագիծը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Վերը նշված հարցերի շուրջ աշխատաժողովի մասնակիցները եկել են հանձայնության, որի արդյունքում Եվրասիական տնտեսական հանձնաժողով ձեռնամուխ կլինի էլեկտրոնային ուղեկցող փաստաթղթերի անդրսահմանային փոխանակմանն ուղղված ծրագրի իրականացման գործընթացի արագացմանը:

Համաձայնել են նաև, որ դրոշմավորման մասին համաձայնագրում նշված պահանջներից բացի, նպատակահարմար է ստեղծել անդրսահմանային առևտրի ժամանակ դրոշմավորված ապրանքների մասին տեղեկատվության փոխանակման տեխնոլոգիական հնարավորություն ապրանքի վաճառողի (արտահանողի) կողմից:

Վերը նշված հանդիպման արդյունքներով ստորագրվել է «Եվրասիական տնտեսական միության տարածքում ապրանքների նույնականացման միջոցով ապրանքների դրոշմավորման ներդրման տեխնոլոգիական ասպեկտների վերաբերյալ» խորհրդակցության Արձանագրություն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ակնկալվում է հաստատել կայուն համագործակցություն դրոշմավորման ենթակա ապրանքների մասին տեղեկատվության փոխանակման հարցում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝ 27.05.2019թ.